# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 9 | Նոյեմբեր | 2021 թ. | Բ | 0406848352 |
| [4] Մատուցման ամսաթիվը | | | | |
| 9 | Նոյեմբեր | 2021 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 7 | 8 | 6 | 7 | 3 | 3 | 9 | 5 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | |

| | | |
|---|---|---|
| [10] Անվանումը | ՎԻԼԵՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ) | |
| [11] Բանկային տվյալները | Կոնվերս բանկ ՓԲԸ | N 19300293107200 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ Փ. 16 30 | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 5 | 0 | 6 | 6 | 3 | 4 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | |

| | | |
|---|---|---|
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ֆին նախ աշխ գործ վարչ | N 900011180081 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Գերմաներեն-հայերեն գրավոր թարգմանություն | էջ | 23.5 | 4000 | | 94000 |
| Ընդամենը | | | | | | 94000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ HAMBARDZUMYAN VILENA 5804830600

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

09/11/2021 15:58:35

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

16/11/2021 15:16:46

**ՈՐՈՇՈՒՄ**

թարգմանիչ ներգրավելու մասին

ք. Երևան

25.10.2021թ.

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ, երկրորդ դասի խորհրդական Մ. Բուլղադարյանս, վերանայելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում սկսված թիվ 22-75-20 վարույթի նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ՝**

2020 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Վահրամ Վալոդիայի Գուրողլյանին պատկանող գույքի վերաբերյալ սկսվել է թիվ 22-75-20 ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել թարգմանել Ավստրիայի Հանրապետության հողային ռեգիստր էլեկտրոնային կայքէջից ներբեռնված փաստաթղթերը:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ ներգրավել թարգմանիչ Վիլենա Քաջիկի Համբարձումյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AU03676081, տրված՝ 20.07.2021թ., վավերական է մինչև 20.07.2031թ., ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.06.2013թ. տրված վկայական՝ նոտարական գործողությունների մասնակցող թարգմանչի որակավորում ստանալու մասին):

Վիլենա Համբարձումյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և գերմաներեն լեզուներին, նրա ծեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով,

**ՈՐՈՇԵՑԻ՝**

Վահրամ Վալոդիայի Գուրողլյանին պատկանող գույքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսված թիվ 22-75-20 վարույթով թարգմանություն իրականացնելու համար ներգրավել թարգմանիչ Վիլենա Քաջիկի Համբարձումյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AU03676081, տրված՝ 20.07.2021թ., վավերական է մինչև 20.07.2031թ., ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.06.2013թ. տրված վկայական՝ նոտարական գործողությունների մասնակցող թարգմանչի որակավորում ստանալու մասին):

Վիլենա Համբարձումյանին նախազգուշացնել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության հիմքերի վերաբերյալ տվյալները և դրա ընթացքի ու արդյունքների մասին տեղեկություններն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342.2-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի**
**ծագում ունեցող գույքի բռնագանձման**
**գործերով վարչության դատախազ**

Մ. Բուղդարյան

*__ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ__*

*Ստացա սույն որոշման օրինակը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9–րդ հոդվածի քաղվածքը:*

*Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 342.2–րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:*

*Ծանուցմանից* *Վիլենա Համբարձումյան*

«23» 10 2021 թ.